էր մեր շուրջը ու ճօճւում անընդհատ, անգուսպ ծիծաղ պատճառելով իմ ընկերակից նաւսպաներին, որոնք քիչ-միչ հասկանում էին ճապոներէն:

—Դեկուսկէ-սան,— բացականչեց նաւսպաներից մէկը.— ապա՛ ցոյց տուր շնորհքդ, տեսնե՛նք, ինչպէս ես ուրիշներից ձեւ առնում:

Նա գլխով արեց. չարաճճի մի բան փայլեց նրա աչքերում: Եւ մի վայրկեանի մէջ բոլորովին կերպարանափոխւեց, կծկւեց, կնճիռներ եկան դէմքին եւ դարձաւ մի փնթփնթող ծերուկ, որ իր համար կերակուր է պատրաստում: Եփում էր, խառնում էր կերակուրը, երեւակայական ամանի մէջ, համն էր առնում, դժգոհութեամբ շարժում էր գլուխը ու շարունակ փնթփնթում: Ձայնը դուրս էր գալիս մի տեսակ խուլ ու սեղմւած, կարծես իսկապէս բերանը կերակուրով լիքը լինէր:

Վերջապէս թողեց, քրքչաց երեխայական հնչուն ծիծաղով եւ հոլի պէս սկսաւ պտոյտ գալ: Նա զգում էր, թէ այդ վայրկեանին բոլորի սիրելին էր:

Յետոյ ներկայացրեց մի ամբողջ տեսարան, փոխնիփոխ դառնալով բարկացկոտ ամուսին, քմահաճ կին եւ նրանց ծառա: Սաստիկ ծիծաղաշարժ կերպով կիտում էր յօնքերը, բուռն շարժումներ էր անում, ամուսինը ներկայացնելիս, պճրանքով շուռ ու մուռ էր գալիս սենեակում հովանոցը ձեռքին, երբ կնոջն էր ներկայացնում, եւ ամենալուրջ ձայնով խրատներ էր կարդում, երբ դերը հասնում էր ծառային:

Շատ բնորոշ էր նոյնպէս մի տեսարան, որ պատմում էր ու ներկայացնում մի՝ կախարդական աշխարհն ընկած ճամփորդի: Կախարդը նրան երկար տարիներ իր մօտ պահելուց յետոյ արձակում է եւ տալիս է նրան, իբրեւ հրաժեշտի նւէր, մի արկղ, պատւիրելով, որ չը բանայ: Բայց ճամփորդը շատ